



Դափնեկիր Յայ կատարողները Թորոնթոյում

Թորոնթոյի համայնքը վերջին տարիներին զգալիորեն աշխուժացած է: Կազմակերպուած ձեռնարկները ոչ միայն աչքի են ընկնում իրենց քանակով այլ նաեւ որակով ու բազմազանութեամբ: Ուրախալի է այն երեւոյթը որ յաճախակի դարձած ճաշկերոյթ-խրախճանքներին զուգընթաց համայնքի անդամները ժամանակ առ ժամանակ առիթ ունեն սնուելու նաեւ գեղագիտական բարձրաճաշակ արուեստով:

Այս ասպարեզում իր արժանի դերակատարութիւնը ունի նաեւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ յարկի ներքոյ աշխատող CAAPA (Կատարողական Արուեստներու Գանատահայ Ընկերակցութիւն) կազմակերպութիւնը: Այս կազմակերպութիւնը իր առաջնահերթ առաքինութիւնն է համարում դասական (Classical) արուեստի հայ առաջնակարգ ու երիտասարդ արուեստագետներին ծանօթացնել քանադահայ համայնքին եւ քանադական հասարակութեանը:

CAAPA-ի գործունեութեան շնորհիւ Թորոնթոյի համայնքը վերջին տարիներին առիթը ունեցաւ վայելելու աշխարհահռչակ «Յայաստանի Կամերային Նուագախումբ»ի, «Յայաստանի փոքրիկ երգիչներ»ի, «Չիլիսկիրեան» Քառեակի, «Լոյս» հնգեակի, Տաթևիկ Յովհաննէսեանի եւ այլոց կատարողական բարձր արուեստը:

Այս յիշարժան երեկոներից մէկը եղաւ նաեւ Մայիսի 24-ը, ուր Յայաստանից ժամանած երկու երիտասարդ երաժիշտներ իրենց կարողութիւնը ցուցադրեցին Թորոնթոյի համայնքին: Ջութակահար Մանան Գարուկեանը հանդէս եկաւ J.S. Bach-ի, F. Kreisler-ի, Է. Բաղդասարեանի, Ա. Խաչատուրեանի եւ Կոմիտաս Վարդապետի ստեղծագործութիւնների կատարումներով:

Բացառիկ հմտութեամբ հանդէս եկաւ 25 ամեայ դաշնակահար, միջազգային տասնեակ մրցոյթների դափնեկիր՝ Արուս Աճեմեանը: Նա իր կատարումների ընթացքին առատօրէն թել տալով իր զգացմունքներին կարողացաւ իր ուրոյն դրոշմը դնել տւեալ ստեղծագործութեան վրայ: Ծրագրում զետեղուած՝ Ա. Խաչատուրեանի, F. Chopin-ի, Կ. Օրբելեանի եւ Աննո Բարաջանեանի երաժշտութիւնը ունկընդրին հրամցուեցին անթերի կատարողութեամբ: Տաղանդաւոր երիտասարդուհին ընդառաջելով հանդիսատեսի բուն ծափահարութիւններին հրաշալի կատարումով ներկայացրեց Moszkowski-ի Caprice Espagnol ը:

Հանդիսատեսները մեկնցին, հագեցած՝ արուեստի հոգեւոր սնունդով ու Սեպտեմբեր ամսին կայանալիք CAAPA-ի պատմական ու շքեղ նախաձեռնութեան սպասումով:

Ա.Տ.Յ.